Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին՝ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հիմքում դրել է համամասնության սկզբունքը, որը պետք է համապատասխանի բավարարված հայցապահանջին:

Դատարանը, նկատի ունենալով, որ հայցվորը հայցադիմումը դատարան ներկայացնելիս վճարել է օրենքով նախատեսված պետական տուրքի գումարը, իսկ հայցը ենթակա է բավարարման, գտնում է, որ պետք է պատասխանողից հօգուտ հայցվորի բռնագանձել նախապես վճարված պետական տուրքի գումար:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «ՊՐԻՄԱ ԼԱԲ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության՝ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի Արարատի մասնաճյուղի արդիականացման համար անհրաժեշտ բժշկական սարքավորումների, գործիքների, պարագաների և կահույքի ձեռք բերման նպատակով 11.07.2024 թվականի թիվ 1 որոշմամբ հայտարարգրված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/64/3» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմված թիվ 2 արձանագրությամբ «ՊՐԻՄԱ ԼԱԲ» ՍՊ ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել.

1.1. ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի Արարատի մասնաճյուղի արդիականացման համար անհրաժեշտ բժշկական սարքավորումների, գործիքների, պարագաների և կահույքի ձեռքբերման նպատակով 11.07.2024 թվականի թիվ 1 որոշմամբ հայտարարված թիվ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/64/3» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմված թիվ 2 արձանագրությամբ՝ «ՊՐԻՄԱ ԼԱԲ» ՓԲ ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումը ճանաչել անվավեր:

2. ՀՀ առողջապահության նախարարությունից հօգուտ «ՊՐԻՄԱ ԼԱԲ» ՍՊ ընկերության բռնագանձել 100.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարած պետական տուրքի գումար:

3. Վճիռը կամովին չկատարելու դեպքում, այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Աննա Շիլաջյան**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IEDE-5A59-40FE-BB28 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am